



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

# ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ

(ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ)

(Արտատպւած «ՄՈՒՐՃ» ամսագրից)



Թ. Ի Ֆ Լ Ի Ս  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՇԵԱՆՑԻ

1891

ՀԱՊՈՒ ՏՈՄԱՆՅԱՆ

10  
215

Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԿԱՆԴՐԱՑՈՒՅԹ

# ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ

(ԿԵԱՆՔԻ ԳԾԵՐ)

(Արտասարած «ՄՈՒԲՃ» ամսագրից)



ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Գ. Ա.ՕՏԻԵՆԵԱՆՑԻ

## ՆԻԱԶԱԾ ԿԵԱՆՔԸ

Բազւումն էր, եօթանատուն թւականների սկիզբ-ներում։ Աշունը արգէն կիսւել էր և երեկոները ցուրտ էր անում։ Մարդիկ սկսում էին սովորել զըռ-ները փակել և աշխատում էին սենեակների մէջ տաքութիւն պահպանել։

Անշուք և կիսախարիսուլ քարւանսարացի սե-նեակներից մէկում զետեղւած էր մշակների մի խումը։ Սենեակը գատարկ էր ամբողջ ցերեկը, որովհետև մշակ-ները զրում զանազան զործերի վերաց էին լինում։ Նա կենդանանում էր երեկոները, երբ մշակները ժողովում էին միմեանց տեսնելու և զիշերելու։

Նորեկ պանդուխո Օվանէսը, այսօր աւելանում էր այդ խմբին։ Նա մշակներից մէկի հետ էր ծանօթ միայն և սորա միջոցով նա լնդունւեց խմբի մէջ։ Նորա մասնակցութիւնը մինչեւ անգամ՝ ցանկալի էր խմբի համար, որովհետև նա բան հասկացող էր համարում և զրագէտ էր։

Օվանէսը իւր ծանօթ մշակի հետ եկաւ սե-նեակ, երբ արգէն մութն ընկած էր։ Մտնելով սե-նեակը, նոքա թէեւ մթութեան մէջ, ոչ ոքի չը նկա-տեցին, բայց և այնպէս բարեեցին։

— Բարի իրիզուն։

219-63

—Աստուծու բարին, սկատասխանեցին կամաց  
մի քանի ձայներ:

Օվանէսը իւր ծանօթին հետևելով՝ փոքր ինչ  
առաջ գնաց սենեակի մէջ, վայր զբաւ իւր կապոցը  
և նստեց վերան:

Այդ ժամանակ սենեակի մի անկիւնում վառ-  
ւոց մոմ, որից աղօտ լոյս սիռւեց չորս կողմը: Օվա-  
նէսը այդ ժամանակ կարողացաւ տեսնել սենեակը և  
նորա մէջ նստածներին:

Սենեակի մէջ հաւաքւած էր մինչև տասն-  
տասներկու մշակ: Ամեն մարդ տարածել էր իւր ան-  
կողինը և վերան ու մօսին նառել: Մի քանիսի ան-  
կողինը կատարեալ էր, ունէր և վերմակ ու դոշակ-  
միւներինը — մի կարպեալ էր դոշակի փոխարէն.  
իսկ մի քանիսը ոչինչ չունէին ամենենին: Անենեալի մի  
անկիւնում զբւած էր մի ջրի կուժ: Մի քանի փոք-  
րիկ արկղներ էլ ընկած էին այս ու այն մշակների  
կողքին: Օվանէսի վերաց այս անշքութիւնը և աղքա-  
տութիւնը ծանր տպաւութիւն արաւ:

Մշակները սլատրաստում էին՝ լսու երևոյթին՝  
մի կտոր հաց ուտելու և յետոյ քնելու:

Օվանէսը մանրամասն տնալզելով՝ ման էր ածում  
իւր աշքերը: Յանկարծ նորա ուշքը զբաւեց ցնցոսի  
հազած մի մարդ, որ նստած անկիւնում թէ էր  
խմում թիթեղեաց թէյամանից: Նա ժամանակ ժամա-  
նակ ինքը իւր հետ խօսում էր կամաց վնիթվնմթալով:

—Փառք Քեզ, Տէր, փառք, որ ինձ այս ուրախու-  
թիւնը ու ել ես. փառք Քեզ, դանդառի անդ չունեմ:

Օվանէսը նայեց թշւառին և չը հասկացաւ թէ՝  
ինչումն է նորա ուրախութիւնը:

Նա նման չէր միւս մշակներին: Նա չունէր սոցա-  
բնական, միամիտ, բարի կերպարանքը: Նա ձնշւած,  
սաստիկ տանջւած, ձմլածի մի հայեցք ունէր,  
որից երևում էր, որ նա շատ ծանր օրեր է տեսել  
իւր կեանքում: Նա բոլոր իւր կազմւածքով, իւր շար-  
ժումներով, իւր սովորութիւններով սաստիկ տարբեր-  
ում էր վրջապատողներից:

Ո՞վ պէտք է լինի այս օտարոտին, մոածեց  
Օվանէսը:

Թշւառը ածեց բաժակի մէջը շատ բաց թէյ.  
կծեց հացի մի կտոր և սկսեց կում-կում թէյ խմել:

—Փառք Քեզ, Տէր, կրկնեց նա, լի եմ լի,  
փառք Քեզ, Քո շնորհքով կենդանի եմ, ո՞վ զիտէ,  
որքան կան գժբաղդ, անոտոն մարդիկ. ևս շնորհա-  
կալ եմ, տեսնում եմ, որ հանգիստ շունչ եմ  
քաշում, առանց ցաւի ապրում եմ, փառք Քեզ:

Որչափ տանջւած հալածւած պէտք է լինի այս  
մարդը, որ իւր ներկայ թշւառ զոյութեան համար  
այնպէս սրտառուց փառք է տալիս:

Օվանէսը միսեց աւելի զննաբար նայել և ինչ  
տեսաւ, տեսաւ որ խեղճը զուրկ է մի ականջից: Այդ  
բանը նորան բոլորովին զարմացրեց և ցնցեց.

—Ո՞վ է զա, հարցրեց նա իւր ծանօթից, մշակ է:  
—Զէ, մշակ չէ, բաց մէկ-մէկ մշակութիւն էլ է  
անում:

—Ի՞նչ մարդ է:

— Գերի է, աղատւած գերի է։ Թիւրքմենստանից է եկել։ Ռուսը երբ գնացել է այնտեղի հողը առել, գերիներին աղատել է... սա էլ այն աղատւածներիցն է։

Օվանէսին սկսեց աւելի ու աւելի հետաքրքրել այդ մարդը։ Օվանէսը նկատեց նորա մօտ ընկած մի պատառուած զիրք և օգուտ քաղելով ացր հանդամանքից՝ հարցրեց։

— Այն ի՞նչ զիրք է, կարելի՞ է տեսնել, դիմեց նա աղքատին բարձր ձայնով։

— Սա ի՞նչ է։ Սա սուրբ զիրք է, սա անհաւատներից աղատւած սրբութիւն է։ Աւետարան է հին ձեռադիր։

Մշակներից մեկը յանձնեց Օվանէսին զիրքը, որ խակագիս դուրս եկաւ մի հին ձեռադիր աւետարան։ բաց քրքրւած, պակաս թէ դլիսից, թէ միջից և թէ վերջից։

Խնչպիսի դժւարութեամբ ձեռադիրն էր աղատւել, այնպէս էլ նորա խեղճ տէրը։ Երկուսն էլ պատռուած, աղտոտւած, ճգմւած, չարչարւած։

— Խնքդ կարդալ զիտե՞ս, հարցրեց Օվանէսը։

— Ո՛չ, սիրելիս, չեմ իմանում։ Բաց իմացողի կարդացնել տւած եմ։ Ողորմած հոգի ներսէսը, Աստուած նորա հոգին լուսաւորի, դուք չէք ճանաչիլ, խեղճն անհատակ եղաւ, ա՛հ թէ մի երկու տարի էլ կասլրէր... հա՛, նա կարդալ իմանում էր։

— Խնչպէս երեսում է, կեանքումդ ծանր օրեր շատ ես տեսել, ասաց Օվանէսը կարեկցաբար։

Խեղճը պլուխը թափ տւեց, աչքերը երկինք բարձրացրեց և անքալով արտասանեց։

— Ես նորից ծնւել եմ. ես նորից աշխարհը եմ ընկել։ Դժոխքից արքայութիւն եմ փոխել։ Ե՛հ... դուք չէք կարող հասկանալ։ Աստուած ոչ ոքի այն օրին չը հասցնի... խեղճ ներսէս, նահատակւեց սուրբի պէս։

— Յնունդ ի՞նչ է, հարցրեց Օվանէսը։

— Ստեփան։

— Ստեփան աղքէր, մի քանի բան պատմիր քուշած օրերիցդ։

— Ի՞նչ պատմեմ։ Խնչ պատմելու բան է, ո՞ր պատմեմ։ Կատարեալ անասւնի կեանք էինք վարում։ Եմ առաջւաց տէրս լաւ մարդ էր. մի քիչ խլուծում էր, խակ երկրորդը և երրորդը այնպիսի անգութներն էին, որոնց հաւասարը հազիւ թէ մեկ էլ պատահի աշխարհում։ Հազիւ մեկ տիրոջ սովորում էինք, մեկ էլ տեսար մի ուրիշի ձեռքն էինք լնկում։

— Խնչպէ՞ս։

— Ծախում էին էլի, ուզիղ ծախում բազարում, ինչպէս մեկ ապրանք։ Սակարկութիւն էր լինում շատ մեծ։ Առնողը չէր հաւանում ապրանքը, փուա էր զնում, ծախողն էլ, զլիսին զիազի, իւր կերպ գովում էր։ Մէկ անսպիսան հարուստ (ամեն անգամ, որ միտքս է դալիս, կատաղում եմ) մօտեցաւ ինձ, բացեց ատամներս նայեց, ձեռքերիս ափերը բաց արաւ, մատներս տնդղեց, մէջքս մի բոռնցքով

փորձեց և կարծես հաւանեց. բայց էլի չ'առաւ, ինչ  
որ մի դատարկ հաշվի պատճառով:

— Ի՞նչ էիք անում այդ տէրերի մօտ:

— Ամեն բան, ինչ հրամացում էին. տան ծա-  
ռայութիւն էինք անում, բեռն էինք կրում, պահա-  
պան էինք դառնում: Խեղճ ներսէսին բեռնակիր էշի  
պէս շարշարում էին: Բեռը գնում էին մէջքին և  
քշում: Եթէ յօդնում էր, կանգ էր առնում, մորակով  
նորան զգաստայնում էին: Ասոււած հոգին լուսաւորի:

— Ուրտեղից, ի՞նչպէս ընկաք այդ անգութ-  
ների ձեռքը:

— Դա անվերջ պատմութիւն է: Դա մի քանի  
օրւայ առելիք է: Հէնց այն բաւական համարիր, որ  
երբ գերի ընկայ, ինձ տանողը ինքը ձիաւոր էր, իսկ  
ես ոտքով: Նա թոկը գձել էր վիզու ու ձիու վերած  
նասած՝ քաշում էր ինձ իւր ետեից անապատների  
միջով:

Ստեփանը խոր հոգոց հանեց և կանգ առաւ:  
Բաժակում թէյը հովացել էր: Նա սկսեց՝ գլուխը  
թափ տալով՝ թէյ խմել: Օվանէսը նայեց նորա ան-  
ձոռնիացած, կիսասպուշ երեսին, խոր ընկած աշ-  
քերին, կնձռուած երեսվերքին, կախ ընկած շրթուն-  
քին և զգացւեց:

— Խեղճ մարդ, խեղճ ագամորդի, մտածեց նա,  
այս ինչ թշւաս վիճակի մէջ է մարդս ասլում: դեռ  
ստրկութիւնը վերացած չէ եղել աշխարհքիցս...

Ստեփանը թէյի բաժակը շուտով դատարկեց,  
թէկով սրբեց բերանը, շուռ եկաւ Օվանէսի կողմը  
և շաապով ու անհանդիսա կերպով պատմեց հետեւալը:

«Նատ բան հարկաւոր չէ պատմել. ես ձեզ մէկը  
կասեմ: Նորա համեմատ էլ ուրիշ բաները հասկացէք:

Մի անգամ՝ իմ տէրը մի խնջոյք էր կազմել.  
Հրաւիրել էր պատւաւոր մարդիկ. պատրաստել էր  
տւել կերակուրներ... Մի խօսքով ամեն բան կարգին  
էր, ինչպէս հարկաւոր էր:

Խնջոյքի զլխաւոր զարդը մի նորեկ հոչակաւոր  
թառածող էր, որ Պարսկաստանից անցել էր մեր  
կողմերը: Գովւած էր թէ նորա երդը, թէ նորա թառը:  
Տողովուրդի մէջ խօսում էին՝ թէ այդ թառին շատ  
ոսկի են տւել. բայց երգիչը չի ծախել նորան, ասելով  
որ նա ինչպէս չի կարող իւր ձայնը ծախել, այնպէս  
էլ իւր թառը:

Տեղացի երգիչները նախանձից կատաղել էին,  
բայց ինչ կարող էին անել: Նոցա բամբասանքը տւեղ  
չէր համառում, նոցա խօսքերի վերաց ուշք դարձնող  
չէր լինում:

Խնջոյքը երկայն տւեց: Ամենքս ոտքի էինք, տա-  
նում էինք բերում, այս կողմ այն կողմ վազվացում:  
Նիւրերը հիացած էին երգչի ձայնից և երգերից:

Բայց ամեն բանին վերջ կայ. Հիւրերը յօդնեցին,  
կամաց-կամաց տուն ցրւեցին:

Երգիչը մնաց տիրոջս տանը: Նորան իւր ընդեռ-

ների հետ ցոյց տւին մի առանձին սենեակ, որ հաճ-  
զատանան գլշերը:

Զը նայելով, որ ամբողջ օրը և գիշերը ոտքի  
վերաց էի ես, բայց էլի պէտք է արթուն մնալի և  
պահապանութիւն անէի: — Դէս ես էլ մարդ եմ, երկաթ  
չեմ, քար չեմ, յօդնել էի, ինչպէս եղաւ քունս տա-  
րաւ և մի քանի ժամ հանդիս քնեցի: Իաց էլի  
ժամանակին զարթնեցի, այնպէս որ քնած լինելս ոչ  
ով չէր նկատել:

Առաւօտը յանկարծ մէկ էլ տեսնեմ՝ մի ինչ որ  
աղմուկ է ընկել տունը: Երգիչը որոնել է իւր թառը,  
որ դրած է եղել իւր կողքին և չի գտել: Դէս, զէն,  
սորան նորան հարց ու փորձ անել, ոչինչ չեն դանում:  
Եկան իմ գլխին կանգնեցին, ինձնից հաշիւ պահան-  
ջեցին: Ես ի՞նչ իմանամ, ես ո՞րտեղից թառ գտնեմ:  
Տէրս բարկացաւ, փոքրաւորները բարկացան, ինձ հար-  
ւածներ տւին, ասլուակներ հասցրին: Եւ սկսեցին շա-  
րունակել խուզարկութիւնը:

Մի քանի ժամանակից յետոց լուր եկաւ բազա-  
րից, որ իբր թէ ինձ տեսնող է եղել թառը փախցնե-  
միս: Թէ ի՞նչպէս և ո՞րտեղից էր ծագել այդ բար-  
բասանքը — ո՞վ կարող էր հասկանալ: Իաց եկ՛ք,  
իմ զրութիւնը տեսէք:

Տիրոջ կառաղութիւնը անսանլի էր. Նա առաւ  
ձեռքը մորակը ու ընկաւ ջանիս. էլ չէր նայում թէ  
որտեղին է խփում: Նա յօդնեց ու յանձնեց մորակը  
իւր զլխաւոր սպասաւորին, որ նա շարունակի ծեծելը:  
Ինչքան հաւատացնում էի, որ ես ամենելին տեղեալ

չեմ այդ բանից, ոչինչ չէր օգնում: Երկայն ծեծելուց  
ու ջարդելուց՝ զետին զլուեցի: Քացիները լրացրին,  
ինչ որ պակաս էր մնացել մորակահարելուց:

Որտեղ գնացին, ում հետ ինչ խօսեցին, ես  
չը գիտեմ. միւս օրը յացանեցին ինձ, որ եթէ թառի  
տեղը ես ցոյց չը տամ, պէտք է զբկւեմ մի ականջիցո  
և մի աչքիցո: Տէր Ասուուած, այս ի՞նչ ցաւ է, այս  
ի՞նչ գժոխք է, որ լնիկը եմ մէջը, ի՞նչ անեմ, ինչպէս  
ինձ արդարացնեմ, ինչպէս թառի հետքը դռնեմ:

Անցաւ երկու օր էլ. ոչինչ չը գոյնւեց: Ինձ չարշա-  
րում էին անողորմաբար, թաղնում էին ծարաւ, քաղ-  
ցած, ծեծում էին փայտով և ձեռքով, քացահա-  
րում էին: Ես իրաւունք չունէի ոչ ոքի ոչինչ ասեի:  
Վերջապէս ինձ հրապարակ հանեցին, որ տած  
սպառնալիքները կատարեն՝ մի ականջս կտրեն, մի  
աչքս հանեն:

Այնպէս մի դող բռնեց, որ կարծես թէ սաստիկ  
տենդի մէջ լինէի. սառն քրտինք պատել էր մար-  
մինս: Ես զիտէի, որ անզութները իրանց սատծը  
անելու են, որ առանց խղճալու ինձ կտրատելու են:  
Ում զիմէի, ի՞նչ ասէի:

Նացեցի երկինք, Ասուուծուն ազօթելու, բայց մի  
հարւած ինձ սթափեցրեց ու վայրենի մի ձախ խօսեց.

— Կառակները ու խորամանկութիւնները թող,  
թառի տեղը ասա, ում ես ծախել՝ յայնիր:

— Ոչ մի տեղեկութիւն չունեմ, պատասխանեցի  
ես, հաւատացնում եմ, որ մեղաւոր չեմ. Ասուուծ,  
երկինք, գետին, սուրբերը վկայ, արևս վկայ, ես գժոխքի

սատանայի բաժին լինեմ—ոչինչից տեղեակ չեմ:  
—Քո ձեռքին տեսնող է եղել, գոռացին վերաս:  
—Ո՞վէ, ո՞վէ տեսել, թող զայ՝ իմ երեսիս ասի էլի:  
—Զայնդ կարիր, քեզ հետ պէտք է երկայն զրոյց-  
ներ սկսենք. քո բանը վերջացած է: Ե՞ց, Աշմաղ:

Ես ինքս ինձ կորցրել էի. հրապարակը մարդ-  
կանցով լիքն էր, մեծաւորներ կային, ևս ոչինչ չել  
տեսնում; կարծես թէ դոքա բոլորը երազի մէջ էին.  
ես միայն զգում էի, որ դահիճներս անողորմ կերպով  
իրանց սպառնալիքները զլուխ են բերելու:

—Աշմա՛դ, որոտաց մի դեխ ձայն, սորա ականջը  
թոցրու:

Ուրեմն սկսեց, ուրեմն իմն ինձ հասաւ: Յու-  
սահատութիւնս կատարեալ էր. էլ ամեն բան վերջա-  
ցաւ: Թէ ինչպէս Աշմաղը մօտեցաւ ինձ և ինչպէս  
ականջս կտրեց—ես համարեա չը նկատեցի: Եւ ցաւը  
թէւ մէծ էր. բաց ես սարսափից քարացել էի:

Դողս վերջացաւ, ես անզգայի նման դարձաց:  
Միայն մի միաք աչքիս առաջին էր, որ շուտով տեսո-  
ղութիւնս էլ պէտք է խաւարւի: Ինձ սթափեցրեց  
ժողովուրդի մէջից լսող մի լնդհանուր խուլ տնքոց:  
—Ուհ, օհ, ըրչըր, հառաջեց ամբոխը:

Իմ մազերը կարծես բիզ-բիզ կանգնեցին: Աչքե-  
րումն երեաց արտառունք, որ յորդ կեւով սկսեց  
հոսել երեսովս: Ես երեխայի պէս լաց էի լինում:

—Կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, լաեց  
յանկարծ մի յուսահատ բղաւոց հեռուից:

—Ո՞վէ, ո՞վէ, հարցրին շատերը:

—Ո՞վէ, հարցրի ինքս ինձ, որովհետեւ ձայնը  
ծանօթ էր երեւում: Զը լինի՞ թէ ես սխալւում եմ.  
չը լինի՞ իմ ականջիս սուտ ձայներ են գալիս, ես  
արդէն ցնորւել եմ:

—Կանգնեցէ՛ք, կանգնեցէ՛ք, լսեց կրկին:

Արտասունքներս ցամաքեցին. ես սիրու արի,  
սկսեցի նայել չորս կողմա: Տեսայ, որ բոլորը դարձել  
են երեսները գէպի վազող մի մարդ: Ես էլ  
այն կողմը նայեցի. և ի՞նչ եմ տեսնում: Մէկը վա-  
զում է թաւը ձեռքին բռնած: Տէ՛ր Աստ'ւած: Դա  
ներսէն է: Աշա մօտեցաւ: Եւ իսկ ներսէն է:

—Թառը բերին, թառը բերում են, լսեց չորս  
կողմից:

Ամենքը իրարով եղան: Ներսէսը արագ անցնում  
էր՝ շատ կոպիտ կերպով հրելով ժողովրդին և վերջապէս  
գալով գատաւորների մօտ՝ հւալով, խօսքերը կիսատ  
և շոապ-շոապ արտասանելով՝ ասաց.

—Գողին գտաց, անգութ դողին: Այս խեղճի արեւ  
պէտք է խաւարւէր... առէք և մի ջան աղատեցէ՛ք:

—Ո՞վէ գողը, հարցրին մի քանի ձայներ:

—Մէկը... ազդ յետոյ:

—Ո՞վէ, ատում եմ քեզ, ո՞վէ գողը, մոնչաց  
իմ ակրը:

—Գողը—երգիչ Սալլըն է. նա է նախանձից  
գողացել թառը և նա էլ տարածել է՝ թէ գողը—  
Ստեփանն է: Ես Սալլըն անից եմ գուրս քաշել թառը:

—Դու ո՞րակեցից իմացար, որ նորա մօտ պէտք է  
լիներ թառը, հարցրեց մի ձայն:

— Մէկը խղճաց Ստեփանին և ինձ յայտնեց:  
— Ո՞վ, ասա շուտ, թէ չէ...  
— Սադրդի ծառան, ասաց կամացուկ ներսէար  
և լոեց:  
— Մեղապարտը ազատ է: Ահմագ հեռա-  
ցի՞ր.

Հենց որ լսեցի իմ մասին ազատ խօսքը. ևս  
յնց եցի և ուշաթափեցի ընկայ: Ի՞նչ կատարեց  
հրապարակում, ել չը տեսաք:

Եհ, ել ի՞նչ պատմեմ: Սիրո չունեմ: Հիմի ել  
տանջում եմ, երբ յիշում եմ: Մեռած անդից կեն-  
դանացել եմ, նորից ապրում եմ: Բայց խեղճ իմ  
ներսէս. Խեղճը ինձ ազատեց ու ինքը նահատակ-  
ւեց: Երկու օրից յիտոյ դառն ներսէսին մորթւած  
և կորատած: Կ'ոչ կեանք էր ի՞նչ. — զժոխք էր:

Ես որ փառք եմ ապահու հիմիկւայ իմ կեանքին,  
ամենքը զարմանում են. բայց փառք, հազար փառք  
հիմիկւայ օրերիս: — Ամեն բան կը մոռանացի, բայց  
ներսէսին չեմ մոռանում: Վերջին անդամ գնացի ու  
նորա գերեզմանի վերայ խաչակնքեցի այս աւետարանով  
և հողը համբուրելով՝ հեռացայ: Ասուած ձեզ  
ազատ պահի իմ տեսածներից ու կրածներից:

Ստեփանը պատմելու շատ բան ունէր, բայց  
անցեալի տիտուր յիշողութիւնը նորան կաշկանդեց:  
Նա յանկարծ կրծատեց իւր պատմութիւնը անսպա-  
սելի կերպով:

Նորա երեսը այնպէս ցաւոտ կերպարանք ընդու-  
նեց, աչքերը այնպէս մարեցին, ինքը այնպէս կուշ եկաւ,

որ նորան ացդ դրութեան մէջ տեսնելը մի տանջանք էր:  
— Ասուած հողին լուսաւորի, ասաց յանկարծ  
մշակներից մէկը:

— Ասուած հողին լուսաւորի, կրկնեցին շատերը:  
Ստեփանը ացդ ընդհանուր ձայնից դրսուեց,  
բայց մնաց լուռ: Երկայն ժամանակ նա մի խոր  
մտատանջութեան մէջ զլուխը շարժում էր: Յանկարծ  
նա մի ինչ որ բան մտարերեց, ձեռքը տարաւ ճա-  
կատին, բարկացած տրորեց ունքերի վերել և սկիզբ  
արաւ մի պատմութեան՝

— Մի անդամ ել փախցրել էին մի զեղեցիկ  
ֆարսի աղջիկ, որ ընկաւ իմ տիրոջ ձեռքը... Ձէ  
չեմ կարաղ պատմել, չեմ կարող այսօր, սիրոս հան-  
դարու չէ... մի ուրիշ անդամ:

Մշակները աչքով արին Օվանէսին:

— Մի խօսացնիլ, մեղք է. ինքը չի համբերիլ,  
ելի կը պատմի. թող այժմ հանգստանայ:

Մի առ ժամանակ լռութիւն տիրեց: Ստեփանը  
զլուխը քաշ զձեց կրծքի վերայ և երեսը փակեց  
ձեռքերով:

Ացդ ժամանակ մտաւ մշակների խմբապետը, որ  
ացդ երեկոյ ուշացել էր: Օվանէսին ներկայացրին:  
Խմբապետը, որ արդէն ընդունել էր նորան, այժմ մի  
երկու խօսքով բացատրեց նորա անելու հարկաւոր գոր-  
ծերը: Յետոյ դառնալով մշակներին՝ նա մի քանի  
հարց ու փորձեր արաւ և յախնեց հետեւալ օրւաց  
համար վերցրած մի գործի մասին, ուր պէտք է աշ-  
խատէր ամբողջ դոցա խումբը:

Երբ խօսակցութիւնները դադարեցին՝ 0վանէսը,  
որ չէր կարողանում մոռանալ Ստեփանին, հարցրեց  
իւր ծանօթից՝

— Խ՞նչով է ապրում այս խեղճը:

— Մշակներն են մի բան տալիս, ինքն էլ մի քիչ  
աշխատում է: Մենք օգնում ենք. ընկերովի գործ պա-  
տահելուց, նորան մի թեթև յանձնարարութիւն ենք  
տալիս, որ հսկի, նայի հակերին, հաշիւը պահի: Դէ,  
նա շատ բանի սկզաք չունի: Նատ է սիրում թէջ  
խմել: Նորա համար գնել ենք մի թեյաման: Որը  
երկու անգամ տաքացնում է ու թէյ խմում:

— Ասւ, ազգական, բարեկամ չո՞ւնի:


— Խնքն էլ չէ իմանում: Դորա կորչիլլ մօտ երե-  
սուն տարի է: Նամակ ենք զրել տւել — սպասում ենք  
պատասխանի: Մի քիչ փող էլ հաւաքել ենք, որ  
լիրան տանք:

— Խեղճ մարդ:

— Խեղճ մարդ է, աւելացրաւ 0վանէսի ծանօթը,  
կեանքի վերան ուրախ է, ամեն բանից գոհ է. ամեն  
մի օրը ու ժամը օրհնում է: Ի հարկէ՝ քարի վերայ  
քնողը, փայտին փափուկ բարձ կ'ասի: 0վանէս, գեռ-  
շատ կը լսես. — սարսափելի բաներ է պատմում: Նատ  
փորձանքների մէջ է եղել: Այժմ կարծես նորից է  
ծնւել ու սկսում է նորից ապրել աշխարհում:

## Ա. ՆԱՄԱԼԵԱՆ

- |                             |        |
|-----------------------------|--------|
| 1) «ՀԱՐԵՒԱՆԵՐ» . . . . .    | 3 կոպ. |
| 2) «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .   | 3 »    |
| 3) «ԵԶԻԴԻ ԱՊՀՅԻԸ» . . . . . | 5 »    |



Վաճառւում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում  
և «Մուրմա-ի խմբագրատանը»: